ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2024թ. թիվ 1018-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 2024 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԱՀ-4715/24 գրությունը և ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի 07.12.2024թ. զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 27.05.2024թ. թիվ 771-Ն որոշմամբ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված գումարներից 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների հետևանքով հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակով պայմանավորված բնակիչների սոցիալական խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու ընթացքում առաջացած ծախսերը փոխհատուցելու նպատակով աղետից տուժած երեսուներեք քաղաքացու հատկացնել 1695000 /մեկ միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար/ դրամ միանվագ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հնգօրյա ժամկետում հատկացնել գումարը:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

X

2024-12-10 09:42:16 GMT+4
Հավաստված է ԷՖԵՆԴ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Signed by: GHAZARYAN ARAM 2003720081 Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 9
ք.Վանաձոր